



ՄԱՆԿԱՎԱՐԺՐԺԱԿԱՆ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿՈՎԱՍՈՒ

ՊԵՏԱԿԱՆ ԴՊԲՈՑՆԵՐԻ ՀԱՐՔԻՐԱՄԵՐԻՑ ԿԵՆԱՅ
ՀԱՐԱԴՐՈՒԹ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ *

Կովկասում՝ Ռուսաց տիրապետութիւնը սկը-
սում է 1801-իցն Պրաստանի յօժարակամ միաց-
մամբ։ Առաջին անգամ երբ ստք զրին ռուսները
Կովկաս, գեռ ծխում էին Աղա-Մահմատ—Խանի
Հրդեհած դիւզերն։ իսկ Տիփոխը աւերակների մի
կոյտ էր ներկայացնում։ ուրեմն խօսք անգամ չէր
կարող լինել դպրոցների և կրթութեան համար։

Ռուսաց կառավարութիւնը իւր հէնց տիրապե-
տութեան երկրորդ տարին՝ այն է 1802-ին սեպտ.
22-ին բաց է անում առաջին դպրոցը՝ դպրոց
Տիփոխի ազնուականների համար։ որը երկար ժա-
մանակ ամրող Կովկասու միակ կրթական հիմնար-
կութիւնն էր համարուում։ թէև բարձրագոյն իշ-
խանութիւնը մեծ խնամք ունէր այդ հաստատու-
թեան վերայ։ բայց երբ իշխան Ցիցիանովը և կաւ
Տիփոխ 1803-ին է միայն չզտաւ այն տեղ ոչ աշա-
կերտ և ոչ ուսուցիչ։ այլ և դպրոցի տեղն անգամ
յայտնի չէր։ 1804-ին դպրոցը կրկին բացուեցաւ,
բայց որովհետեւ ոչ ոք իւր որդուն չէր ուղում
ուղարկել դպրոց, ուստի կառավարութիւնից նպաստ
նշանակուեցաւ աշակերտի հօր, և այս կարդը պա-
հուում էր մինչև 1829 թիւը։ Սակայն ոչ փող
վճարելլ արդեկում էր աշակերտաց յաճախ ու-
սումնարանից փախչել և ոչ էլ զինուոր պահա-
պանները կարողանում էին ուսուցչաց յետ կանդ-
նեցնել արբեցութիւնից որոնք, ընկնելով զինեկտ
երկիր, ամրող օրը հարած ընկած էին լինում իրենց
սենեակում։ Աւուցիչները բացի արբեցութիւնից և
ծներ միակ ուսման միջոց զաւանողներից էին, և
իրենց այս տեսութիւնը պաշտպանելու համար չէին
քաշուում։ յանդուզն նկատողութիւններով յետ
դարձնել տեսչի առաջարկը—չծեծել աշակերտներին,
այլ ուրիշ կերպ պատճել։ Այս բոլորի վերայ պի-
տի աւելացնելով և այն նուազ վարձատրութիւնը,
որը քիչ չէր նպաստում ուսուցչին իմաստութեան
դրկից բարոսի գիրկը նետուել վերջ ի վերջու։

Տիփոխում գիմնազիոն բանալու միտքը պէտք

է դին. - աղ. Սիպեագինին տալ, որ միջնորդեց կա-
ռավարութեան վերոյիշեալ դպրոցը զիմնազիոն
գարձնել, բաց անել գաւառ ական դպրոցներ Տիփոխ-
սում, Երևանում, Կաթողիչեանում, Առղբում, Օր-
գուրատում, Վաղախում և լին և լին, և աւանդելիք
առարկաների կարգին աւանդել տեղական լեզուն
զիշատնեսութիւնն և պարտիզանութիւնն, այլ
և բանալ „Կած. կորուս.“ կոչուած զինուորական
դպրոցը Այս առաջարկի միայն մասամբ իրականաւ-
լու համար երկու տարի պէտք եղաւ։ Գրաֆ Պառ-
կեիչը մեծ եռանդով ձեռք առաւ դպրոցական դոր-
ծը և առաջին անգամ կազմել և հաստատել տուեց
մի կանոնագրութիւն Կովկա գպրոցների համար, որը
1829-ին օգոստ Զին բարձրագոյն հաստատութիւն
ստացաւ, և իսկապէս ասած՝ այդ օրուանից սկսու-
ում է Կովկասի լուսաւորութեան պատմութիւնը.
որովհետեւ մինչև այդ ժամանակ չկային դպրոցների
կանոնաւոր վարչութիւնն, ընդհանուր ծրագիր և
նախահաշիւ, այլ ամեն ոք իրեն ծեռնհաս էր հա-
մարում խառնուել դպրոցական գործին, ամեն
դպրոց իւր ծրագիրն ունէր, որը փոխում էր ամեն
մի անձն ըստ իւր տեսութեան։ Այժմ յիշեալ
կանոնագրութեամբ բոլոր դպրոցները Տիփոխի զիմ-
նազիոնի տեսչի միջոցով ենթարկուում էին կառա-
վարչապետի իրաւասանութեան։

1830-ին բացուում է Տիփոխի առաջին գիմ-
նազիոնը՝ իսկ մի տարի յետոյ էլ առաջին օրիոր-
դաց Կովկասիութը։ Բայց այս բոլորը փորձեր էին
միայն պայազայի համար։ կանոնագրութիւնը և վար-
չութիւնը անզօր էին դպրոցների մէջ յառաջացած
փոփոխութեանց և անկարգութեանց առաջն առնել։
նոյն իսկ գիմնազիոնը, որի վերայ այժմ ծախ-
սուում էր 3000 բուրլի, ոչ մէ մարդիկ էր պատ-
րաստում համալսարանում բարձրագոյն կրթութիւն
ստանալու համար, այլ կառավարութիւնը բաւա-
կանանում էր վարչական գործերը կատարող քիչ
թէ շատ հասկացող աստիճանաւորներ ստանալովի
իսկ դպրոցի բուն նպատակը առ այժմ անտես էր
արուած։ Այս առաջին կանոնագրութիւնը միայն 6
տարի դոյութիւն ունեցաւ։ 1835-ի մայիսի 12-ին
նորը հաստատուեց, թէկ առանց էական փոփոխու-
թեան։

Այս նոր փոփոխութեամբ Կովկասի դպրոցնե-
րի գործերը Խարկովի համալս. տեսչի միջոցով
համարում էր լուսաւորութեան նախագահին, որով
բաւական դժուար էր ի մօտոյ հսկել գործին, անհը-
նար էր ամեն մի դպրոց առանձին առանձին ուսում-
նասիրել մինչդու միւս կողմից մինչեւ այդ ժամա-
նակ ննջող Կովկասը կեանքի նշաններ էր ցոյց տա-
լիս։ մասւոր շարժում սկսել էր զգալի լինել մա-
նաւանդ Տիփոխում։ ուստի և 1840-ին Կովկասի
բարձ. իշխանութիւնը նորից ձեռք առաւ ամրող
ուսումնական մասը նորից փոփոխութեան ենթար-

կել։ Գործին մրութիւն տալու համար պէտք էր կեղրոնացումն ուստի լուս պաշտօնեայ Գրաֆ Աւարովի միջնորդութեամբ բարձրագոյն հրամանով հաստատուեց Կովկ. առաջին վերատեսչութեան պաշտօնը։ Այս նոր կանոնագրութեան զօրութեամբ այդ պաշտօնը պիտի կատարէր Արաստանի վարչութեան անդամներից մինը։ Հենց այս ժամանակ ծագեցաւ և մի բարձրագոյն դպրոց հաստատելու միտքը, սակայն բաւականաչափ ուսանողներ չլինելու պատճառով ցարդ անիրազործելի է մնացել։

1848-ին առաջին անգամ՝ բարձրագոյն հրամանով իր եռամեայ փորձ հաստատուեց Կովկասում դպրոցական հոգարարձութիւնը, և որից պահանջուում էր բարձրացնել դպրոցական գործը թէ ըստ քանակի և թէ ըստ որակի և աչքի առաջ ունենալ այն պակասութիւնները և կարիքները, որ այդ երեք տարում կարող էին ծագել, որպէս զի յետոյ հընարաւոր լինի նպատակայարմար բարեփոխութեամբ վերջնականապէս որոշել խնդիրը։

1851-ին Բարսն Ա. Ի. Նիկոլայի ձեռքով կազմուեց նոր կանոնագրութիւն, որով կամաց կամաց պիտի մօտենային Կովկ. դպրոցները Ռուսաստանի ներքին նահանգներում գոյութիւն ունեցող ուսում հաստատութեանց թէ ըստ վարչականի և թէ ըստ ծրագրի, կառավարուելով ընդհանուր գոյութիւն ունեցող օրենքների հիման վերայ։

Կովկասի դպրոցական վարչութեան անդամներն էին յիշեալ կանոնաւորութեամբ դպ. հոգարարձուն նորա օգնականը, պետական դպրոցների վերատեսուչը, ճարտարապետը և հոգարարձութեան գիւտանը, նշյանպէս հոգարարձական խորհուրդը, որի անդամներն էին դպրոցների տեսուչները, ուրիշ գործին ծանօթ անձինք, այլ և զրաքննական մասնախումբը։ Ամբողջ Կովկասը բաժանուած էր և տեսչութեան, որոնց հսկողութեան տակն էին բոլոր ուսումնարաննական հիմնարկութիւնները։ իրաց առեալ Հայոց ծիսական եկեղեցական դպրոցները, նախահաշիւր, որ 1823թ.-ին 10,000 ր. էր, այժմ հասել էր 219,740 բուրլու, Բարսն Նիկոլային աջակցում էր ժամանակի փոխարքայ Եշիսան Առողջութիւն, որի ջանքով բացուեցին Տիֆլիսում 1846 ս. նունայի, Երևանում ս. Հարիսիմէի (1850 յունվ. 2-ին), այլև Քութայիսի, Համախու օրիորդաց դըպրոցները, որոնք բաղմաթիւ աշակերտուհիներ են տուել ցարդ և մեծապէս նպաստել Թ. Լեզուի, կըրթութեան և ազգեցութեան տարածուելուն յիշեալ քաղաքներում։

1860-ին Բարսն Նիկոլայի պաշտօնը թողնելուց յետոյ փոխարքայ, իշխան Բարեհատինսկու առաջարկութեամբ վերացուեց դպրոցական հոգարարձութիւնը, և դպրոցների վարչութեան գործը յանձնուեցաւ նահանգապետներին և գաւառապետներին, իրեւ դպրոցին մօտից հսկող և տեղական կարիքնե-

րին ծանօթ անձանց սակայն շուտով նկատուեց այս նոր վարչութեան անյարմարութիւնները. զըպրոցները իրենց ծրագրով այն քան իրարից հեռացան, որ մի գիմնազիանից մի ուրիշը մտնել անկարելի էր, յաճախ վէճ ու թիւրիմացութիւններ էին բարձրանում ստորին և բարձր պաշտօնեաների մէջ, և գործը սկսեց կաղալ. Սակայն 1862-ին Բարեհատինսկու տեղ գալիս է Մեծ Խշան Միքայէլ Նիկոլայովիչը, և վերականգնուամ 1859-ի կարգը և հոգարարձութիւնը յանձնում է 1.ազգարեան ձեւմարանի տեսուչ Նեվերովին։

Մեծ Խշ. Օլդա Ֆէօգորովնան Կովկաս եկած օրից առանձին հոգս ունեցաւ օրիորդաց դպրոցների վերայ, 1864-ի Տիֆլիս բացուեցաւ առաջին կարգի օր. դպրոց, որը իրեւ օրինակ ծառայեց յետոյ զանազան տեղերում բացուելիք դպրոցների համար, Ալեքսանդրապոլից, Շուշուց, Ախալքալաքից և ուրիշ տեղերից խնդիրներ եկան օր. դպրոցներ բանալու համար, նոյն իսկ գիւղացիք սկսեցին օգնել դպրոցական գործը։

Նեվերով եռանգուն կերպով կպաւ գործին, վերականգնեցան նորից դպրոցական շրջանները. իսկ 1867-ին կրկին հաստատուեցաւ դպրոցական հոգարձութեան պաշտօնը, և կարճ ժամանակամիջոցում բացուեցան 40 դպրոցներ։ Մինչև 1875-ը նոր կանոնագրութեան կարիք չկար և դպր. վարչութեան ջանքն ու հոգսն է եղել եղածները վերականգնել, բարձրացնել և որ զինաւորն է ըստ կարելոյն մօտեցնել պետութեան մէջ եղած միւս նոյն կարգի դպրոցներին։ Այս շրջանում նշանաւոր երեսոյն պիտի համարուի Տիֆլիսի ուսուցչական դպրանոցի բացումը 1865-ին, որը 1872-ին վերածուեցաւ ուսուց. ինստիտուտի և կոչուեցաւ Աղեքսանդրեան, որի նպատակն էր գիւղ. և քաղ. դպրոցներին պատրաստուած ուսուցիչներ մատակարարել։

Սկսած 1871-ից Կովկասի դպրոցական շրջանը տարեց տարի աւելի և աւելի մօտենում է ուսուց միւս շրջաններին, իսկ 1875-ին արդէն եղած տարբերութիւնները բոլորովին վերանում են. այդ շրջաններում վերջնականապէս որոշուում է իրաքանչիւր կարգի դպրոցի կանոնները, ծրագիրը, ծառայող անձանց կարգը—յար և նման պետ. ներքին նահանգների դպրոցներին. այդ ժամանակում արդէն ուշը է տարձնուում մինչև այդ ժամանակ գոյութիւն ունեցող և պետ. հսկողութեան չենթարկուող դպրոցների վերայ. մասնաւոր և ընկերութեանց ձեռքով բացուած դպրոցները ենթարկուում են ընդհ. Կովկ. դպրոցական վարչութեանը և որ զինաւորն է յառուկ ուշագրաւթիւն է գարձնուում ժողով. դպրոցների վերայ, թէ մեծ իշխան Միխայիլ Նիկալայիշիչը և մեծ իշխան իշխու։ Օլդա Ֆէօգորովնայն անդադար աշխատում են լուսաւորութեան գործի տարածման և

այն էլ խիստ արդիւնաւոր կերպով այնպէս որ նոցա կովկ. ոտ դրած օրից հազիւ անցել էր 10 տարի և գորոց վիճակազրութիւնը ցոյց է տալիս, որ այդ կարծ ժամանակամիջոցում թէ արական և թէ իջական սեռի գորոց յաճախողների թիւը եռապատկուել էր—այնպէս որ երկու սեռից կրթուողների թիւը 55.084-ի էր հասնում, որի համար տարեկան ծախտուում էր 818.625 ր.՝ 90 կոպ.

1877-ին վրայ է հասնում ոռու—թբքական պատերազմը և կանգ է առնում լուսաւորութեան գործի յառաջադիմութիւնը, այլ և շատ տեղեր խանգարուում ու փակուում են գարոցները. պատերազմին հետեւում է լինուականների ապլատամբութիւնը, որը գարձեալ առիթ է դառնում մի քանի գպրոցների փակման, ինչպէս նուխում, Զաքատալում են, բոլոր ձեռք առնելիք միջոցները առ ժամանակ դադարում են, մանաւանդ գանձարանն էլ չէր կարող իւր նպաստը հասցնել կանոնաւոր:

Պատերազմից յետոյ վարչութեան յատուկ ջանքով ոչ միայն փակուած գարոցները բացուեցան, այլ և գպրոցական գործը աւելի սկսեց արագ առաջ գնալ. զիսաւորապէս ջանքեր եղան կովկասում գըտնուած ուսումնարանները գպրոցների հոգարածութեան տեսչութեան ենթարկել և վերջացնելով մէջտեղից մանաւոր բնաւորութիւն ու ծրագիր ունեցող ուս. Հիմնարկութիւնները բոլորը որոշ կարգի գըպրոցների վերածուեցան: Ա. երջին 1895-ի կովկ. գըպրոցների վիճակագրութիւնը ցոյց է տալիս, որ նա մի քայլ ևս արել է յառաջադիմութեան գործում: 1885-ին բոլոր գըպրոցների թիւը եղել է 1.018, ծառայողների 3.898, ծախս 2.350.378 ր.՝ իսկ աշակերտաց թիւը 66.119. իսկ եթէ տարբեր գաւանութեանց և մանաւոր գարոցներում սովորողների թիւն էլ վերան աւելացնենք՝ կունենանք 99.109. 1895-ին պետական գըպրոցների թիւը հասնում է 1.297. մինչ ծախսը տարեկան 3.466.883 ր.՝ և ուսանողաց թիւը 91.692. եթէ ոչ պետական գըպրոցներն էլ առնելու լինենք՝ ուսանողաց թիւը հիասնի 149.973 հոգու. (սորո մէջ պիտի հաշուել և 16.066 ուսանողներ Հայոց եկեղեցական—ծիսական ուսումնարաններից):

Այժմ եթէ մի հայեացք ձգենք 100 ամեայ կովկ. գըպրոցական կեանքի վերայ, կտեսնենք, որ նա տարեց տարի յառաջադիմել է, որբան որ ներել են տեղական հանգամանքները. 10.000 բուրլուց ծախսը բարձրացել է 3.466.883 բուրլու. գըպրոցում՝ սկզբում 10 աշակերտ չի գտնուել, յետոյ ուսանողաց թիւը հասել է 141.973-ի. անշուշտ սրանք շօշափելի յառաջադիմական քայլեր են, բայց եթէ համեմատենք կովկասի կրթական կան գործը ուրիշ երկիրների հետ, նա մեծ զրօն հաւասար մի բան կերւմի. օր. Ամերիկայում 1000

մարդուն գալիս է 208 ժող. գպրոց աշակերտ. Անդ. 161. Գաղղիայում՝ 146. Եւրոպ. Առաջ. 30. իսկ Կովկասում միայն 8, Ամերիկայում կրթութեան գործին մարդագլուխ ծախսուումէ 4 ր. 65 կ. Անդ. Յթ. Գաղղիայում 2. իսկ Կովկ. 14 կոպէկ. Ուրեմն ինչ զարմանք, որ գեռ Կովկ. ժողովուրդը Խորին խաւարով ծածկուած, ոչ միայն չի կարողանում արդիւնաւորել և շահագործել երկրի անհատնում հարստութիւնն ու բարիքը, այլ և մեծամասնութիւնը յետին աղքատութեան մատնուած, զոհ ամեն տեսակ պատահարների, հազիւ կազզանում է իւր օրական հացը հայթայթել. իսկ նորա հարրատութիւնը օտարն է վայելում: Ա. երջացնում ենք մեր խօսքը ամսաթերթի բառերով. «Կովկասին պէտք է գորոց, առանց որոյ անկարիլի է ոչ կուլտուրա և ոչ արդիւնաբերութիւն»:

Ս. Յ.

ՕԳԻ ՄԱԿՐՈՒԹԻՒՆԸ

ԱԹԱՊ. ԶՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ *

Պայիս է ամառը և բերում է շատ շատ բարեաց հետ միասին և ոչ քիչ շարիքները որոնց մէջ եթէ ոչ ամենաառաջին, զոնէ տուաջին տեղերից մինը պէտք է տանք փոշուն, որով այնքան կարող էին պարծենալ մեր զիւղերն ու քաղաքները:

Եիրաւի միշտ մարդ՝ աչքն ու բերանը բանած՝ ման և զալիս օրուայ որոշ ժամանակներին, երբ քամին մրրկում է օզը և փոշու ամզերը ոլորապատյա զրօսնում են փոշոցների երկարութեամբ, երբեմն անցորդին ոտից զլուխ ներկում և երբեմն էլ ճանապարհոց շեղուելով՝ գոնից և պատուհանից ներս մանում տուն:

Բայց առողջապահների հետազօտութիւններից երեւում է, որ մենք շատ քիչ պիտի վախենանք փողոցի այդ կատաղի մշնամուց, քան մեր տան սենեակների հեղարայ անսեսանելի մանր բարեկամներից, վերջինների հասցրած վնասների ոչ չափը և ոչ տեսակները կարելի է մի առ մի թուել: Սենեակի փոշուն պիտի վերադրել մարդկային հիւանդութեանց պատճառներից 10-ից 9-ը:

* Քաղուած „Հետակա շաբաթաթերթից: